№ 8 (161) XV ՏԱՐԻ ՕԳՈՍՏՈՍ 1905

# ԴՐՕՇԱԿ

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

## ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ ՍՈՒԼԹԱՆԻ ԴԷՄ

Հեռագրական գործակալութիւնները հաղորդում են, որ ուրբաթ, յուլիսի 21-ին, Սելամլըքի արարողութիւնից յետոյ, երբ սուլթան Աբդիւլ Համիդ վերադառնում էր պալատ, մի ռումբ պայթեց մզկիթի առաջ։ Սուլթանը ողջ մնաց, բայց իր շրջապատողներից մօտ երկու հարիւր հոգի սպանուեցին ու վիրաւորուեցին։ Նիւթական վնասները ահագին են։ փորձի հեղինակն անյայտ է։ Նշանակուած է զինուորական քննիչ յանձնաժողով՝ գործը պարզելու համար։

---

## „ԲԱՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ"

Կովկասում արիւնոտ անցքերը յաջորդում են իրար շշմեցնող արագութեամբ։ Անօգուտ կը լինէր կանգ առնել դրանցից իւրաքանչիւրի ծաւալի և յարակից հանգամանքների վրայ։ Դրանք բոլորը նոյն են թէ իրենց ծագումով, թէ ընթացքով և թէ հետևանքներով։ Բագու, Նախիջևան, Ջահուկ և Խանուխլար նոյն ոճիրն է, նոյն կօշմարը, որ իր սև թևերը տարածած՝ սլանում է մի վայրից միւսը՝ յառաջընթաց ունենալով արցունք, արիւն, ու աւերած։

Պատկերը որքան զարհուրելի է, նոյնքան և կսկծալի։ Եւ մինչդեռ յառաջադիմութեան, արդարութեան, ազնիւ աշխատանքի, ազատութեան հետամուտ բոլոր հոգիները բնականապէս համակուած են մի խորին վշտով՝ ոչնչացման, աւերածի այս հրէշաւոր, այս անմիտ պայքարի առաջ, որ դիւական թափով խաղում է մեր աշխարհի գլխին, մինչդեռ կարմիր բարբարոսութիւնների շարքը տասնեակ տարիներով յետ է մղում ամբողջ երկրի ստեղծագործական ճիգի ցանկալի յաղթանակը, — ճիշտ այդ ժամանակ կատարւում է մի ճիւաղային խաղ այն մարդու կողմից, որ բոլոր այդ սոսկումների անմիջական պատասխանատուն է։ Կազմակերպուած ջարդերի դժոխային այդ ծրագիրը, որ յղացեց Պետերբուրգում, աւելի լաւ իրագործող չէր կարող ունենալ, քան եղաւ ցարի այդ դարշելի ներկայացուցիչը՝ Վորոնցով-Դաշկով, որ կարողացաւ մոռացնել տալ անգամ Գոլիցինին։

Չինթնու ոստերով ճանապարհ ընկաւ նա Պետերբուրգից և արիւնոտ դանակը ձեռքին՝ անցաւ Կովկասեան շղթան այս նոր Շաքիր փաշան։ Նոյն ժամանակ, երբ Ալիխանով-Ավարսկին նրա յանձնարարութեամբ շրջում է գաւառները և այնտեղ բորբոքում արիւնածարաւ թաթար խուժանի կրքերը, երբ տասնեակ հազարաւոր հայ ժողովուրդը նստում է մոխիրների վրայ և մինչև իսկ Թիւրքիայից քրդերի վոհմակներն են ներս խուժում հայ գաւառներն ասպատակելու ու աւերելու, ճիշտ այդ ժամանակ՝ Վորոնցով-Դաշկով ընդունում է հայ պատգամաւորութիւնը, „յուսադրում և սիրտ է տալիս" նրան։

Որպիսի՜ հեգնութիւն։

Չը գիտենք՝ Դաշկովի այս ծայրայեղ ցինիզմի, այս անպատկառութեան վրայ զարմանանք, թէ հայ պատգամաւորութեան այս ապշեցուցիչ, այս ողբալի քաղաքական տհասութեան վրայ, որ անհասկանալի, համարեա աններելի միամտութիւնն է ունեցել բորենու մօտ գնալ հարցնելու համար, թէ ի՞նչու է նա այդքան արիւնըռուշտ, այդքան անողորմ։

Եւ պատասխանը բնորոշ է։ Թաթարները գազանութիւններ են կատարում Կովկասում, որովհետև հայ կոմիտէներ կան։ Եւ ցարի արժանի ներկայացուցիչը „բարեկամաբար" խորհուրդ է տալիս հրաժարուել կոմիտէներից, հրաժարուել տէռօրիստներից, և մնացածը ինքն իրեն կը կերթայ։

Պալատական աղտեղութիւններով ու դաւերով սնուած այդ նենգաւոր միտքը հայ ժողովրդի կորուստը անդառնալի դարձնելու համար գործ է դնում մէ՛ն այն զէն-

քերից, որոնք բոլոր բռնակալների և բոլոր ժամանակների համար նոյնն են — խաբե՛լ, խաբե՛լ և խաբե՛լ։

Եւ այսպէս, ուրեմն, ամբողջ կայսրութեան և մասնաւորապէս Կովկասի մէջ չտեսնուած մարդակեր ռէժիմը գոյութիւն չի ունեցել. աւազակների, հարստահարիչների վոհմակը, որի անունն է ռուս պաշտօնէութիւն, տարիներ շարունակ չի ստնահարել, չի տրորել ժողովուրդների բոլոր սրբութիւնները. Գոլիցին, Անդրէև, Բոգուսլաւսկի, Նակաշիձէ, ցարի միւս արբանեակների հետ չեն քամել հայ ժողովրդի կենսական հիւթերը, չեն դառնացրել, յուսահատութեան ու կատաղութեան աստիճանի չեն հասցրել նրա հոգին, այլ եղել են միայն կոմիտէներ, միայն տէռօրիստներ, որոնք տակնուվրայ են արել ռուս բռնակալութեան պատրաստած դրախտը։

Հրաժարուեցէք կոմիտէներից, այսինքն վար դրէք զէնքը, որ այսօր բարձրացրել էք՝ ձեզ պաշտպանելու կառավարութեան զինած թաթար խուժանից, և թողէք, որ բարբարոսները մորթոտեն ձեր զաւակները, անարգեն ձեր կանանց, ձեր աղջիկներին, հրդեհեն ձեր տները՝ ցարիզմի հաճոյքի համար։ Հրաժարուեցէք տեռօրիստներից, այսինքն թողէք, որ ցարիզմի սնուցած բորենիները քայլեն ձեր գլուխների վրայ, ճիրաններով պատառոտեն ձեր կուրծքը, դուրս քաշեն ձեր սիրտը և տաք-տաք լափեն ու քրքջան երկնքի երեսին։ Ցարի արբանեակը, ջարդերի կազմակերպողը, նա՝ որի համար թաթարական տարրը, ինչպէս ինքն է ասել, ամենահամակրելի, ամենաօգտակար տարրն է Կովկասում, ուրիշ խորհուրդ տալ չէր կարող։

Հասարակական կեանքի բոլոր խոշոր ցնցումների ժամանակ, երբ դասակարգերի կամ մարդկային այլ համախմբումների բարոյական և նիւթական բազմաթիւ շահեր զարնւում են իրար, երբ ճնշուած, շահագործուած, իրաւազուրկ մասսաներ զայրոյթով ոտքի են ելնում և սպառնում են միահամուռ թափով խորտակել նեխուած ու անարդար ընկերական կազմը, այն ժամանակ ճակատ առ ճակատ պայքարի փոխարէն տիրապետող տարրերը դիմում են բազմաթիւ դիւական հնարների, կազմալուծելու, հաշմանդամ դարձնելու համար հակառակորդի մարտական էներգիան։ Մարտնչող առաջապահների տակաւին տաք դիակների շուրջը գործում են կեղծիքը, նենգութիւնը, ստայօդ խոստումները, ստոր խաբէութիւնը և այն բոլոր արտաքուստ փայլուն դաւերն ու որոգայթները, որոնք ընդունակ են դիւրահաւան և մանկամիտ ամբոխների զայրոյթը մեղմել ու սպառնացող ճակատագրական հարուածը կանխել։

Դաշկովները իրար դէմ հանելով հայ ու թիւրք տարրերը, արիւն և աւեր տարածելով երկրի մի ծայրից միւսը, քաջալերելով կազմակերպուած սրիկայութիւնները հրապարակով, այժմ հրաւիրում են հայ ժողովրդին վար դնել զէնքը։

Ո՛չ, չենք խաբւի։

Եւ մինչև որ չզաւի, չմաքրւի արիւնով ու ոճիրներով յղփացած այդ մթնոլորտը, որի տակ խեղդւում են այնքան ժողովուրդներ, զինաթափի մասին խօսք լինել չի կարող։ Բոլոր ժպիտները, բոլոր քաղցրահնչիւն բառերը, բոլոր „բարի խորհուրդները“ թունաւոր իժերի փշշոցներ են, որոնց կը հետևի մահացու խայթոցը։

Անմեղների արիւնը այն զարհուրելի աւազանն է, որի մէջ մկրտուող մանուկ ժողովուրդը հասուն մարդ և սպառնալի ռազմիկ է դառնում։ Մի՞թէ միայն հայ ժողովուրդը պէտք է յաւիտեան մանուկ մնայ։

Մենք չենք հաւատում, մենք չենք ուզում հաւատալ, հակառակ դէպքում նա արժանի կը լինէր իր դժոխային ճակատագրին։

Ռուս կառավարութիւնը կամեցաւ, որ հայ ժողովուրդը թողնի իր խաղաղ աշխատանքը, իր պապերի արօրն ու գութանը և զինւի արիւնոտ գործի համար։ Եւ նա զինւում է. նա պէտք է զինւի։

Նա կռւում է, և պէտք է կռւի։

## „ԴՐՕՇԱԿ“Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՈՒՂԱՐԿՈՒԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

—

ԹԻՖԼԻՍ, 20 յունիսի

Հայ-թիւրքական արիւնահեղ ընդհարումներ տեղի ունեցան Բաշնորաշէնի և Վաղարշապատի շրջաններում։ Թիւրքերը, թւով մօտ 7,000, ուզեցին յարձակում գործել Վաղարշապատի, Աշտարակի, նոյնիսկ Էջմիածնի վրայ։ Հայ յեղափոխական խմբերը յետ մղեցին նրանց, մեծ կորուստների ենթարկելով։ Տասնեակ թիւրք գիւղեր, որոնք մասնակցել էին թալանին և կոտորածին, աւերուած և խստօրէն պատժուած են։ Գեներալ Ալիխանովից յետոյ, որ յայտնի եղաւ իբրև կատաղի պանիսլամիստ, այժմ պրինց Լուի Նապօլէօնն է ուղարկուած Երևանի նահանգը, կարգը վերահաստատելու համար։ Հայ ազգաբնակութիւնը յոյս ունի, որ նա անկողմնապահ կը լինի։ Հակառակ փոխարքայ Վօրոնցով-Դաշկովի խոստումներին, ոստիկանութիւնը շարունակում է խուզարկել և խլել հայերից զէնքը։ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը հրատարակեց շրջաբերականներ՝ մահ սպառնալով այն բոլոր ոստիկաններին և պաշտօնեաներին, որոնք կը փորձեն զինաթափ անել ինքնապաշտպան հայերին։ Գանձակի նահանգապետ Լուցաու հրաժարական տուեց, չկամենալով աջակցել հայ-թիւրքական ընդհարումներին, որոնք կազմակերպուած են բարձր իշխանութեան աջակցութեամբ։ Գտնուած են բազմաթիւ փաստեր, որոնք ապացուցանում են, որ պանիսլամիստները մշտական յարաբերութեան մէջ են Պետերբուրգի գաղտնի ոստիկանութեան հետ։

ԹԻՖԼԻՍ, 28 յունիսի

Նորագոյն տեղեկութիւնները Կովկասից կրկնակի վրդովեցուցիչ են։ Պանիսլամական ծրագիրը մշակւել է Բագւի մէջ, մասնակցութեամբ սուլթան Համիդի էմիսէրների։ Նախիջևանի և Մաքուի խաները համակերպեցին այդ ծրագրին, նպատակ դնելով՝ կոտորել քրիստոնեայ ազգաբնակութիւնը և յայտարարել Նախիջևանի շրջանը՝ անկախ։ Արաքսի ափին, «ուղէլնի» կայսերական կալուածի մէջ գտնուած է զէնքի մեծ պահեստ։ Այդ զէնքերը ստացուած են նոյն Թիւրքիայից,

որ պիտի բաժանէին Թիւրք խուժանին։ Բռնուած են բազմաթիւ պրօկլամասիօններ, որոնցով մահմէտականները հրաւիրւում են վրէժխնդիր լինել և կոտորել հայերին, այն աջակցութեան համար, որ նրանք սրանից մի դար առաջ ցոյց տւեցին ռուսներին, նպաստելով նրանց տիրապետութեան Երևանեան նահանգում։ Նախիջևանի շրջանի հայ զոհերի թիւը 410 է։ Նախիջևան քաղաքի մէջ հայկական 182 խանութներից չորսն է միայն մնացել։ Մնացածը այրուած և թալանուած է։ Հայերը շարունակում են միւս շրջաններում պատժել ոճրագործութեան մասնակցող Թիւրք գիւղերը։ Սպանուած Թիւրքերի թիւը 400-ից աւելի է։ Ռուս կառավարութեան դիրքը երկդիմի է։ Փոխարքան Թոյլ տւեց մի պանիսլամիստի, Աղաեվ անունով, կաշառուած սուլթանից, հրատարակել հակահայկական մի լրագիր։ Հասարակաց ապահովութիւն չկայ։ Սպանութիւն, Թալան, ընդհարումներ։ Լեզգինները պատրաստւում են յարձակում գործել Սղնախի և Թելաւի վրայ։ Անարխիան կատարեալ է։

ԹԻՖԼԻՍ, 1 յուլիսի

Փոխարքան ընդունեց Թիւրք բէկերին, որոնք մահմէտական ազգաբնակութեան կողմից ներկայացրին ուղերձ և խնդրագիր։ Ընդունելութիւնը ոչ միայն սիրալիր էր, այլ և սրտագին ու հովանաւորող։ Ներկայացնելով իրենց արդար պահանջները, պատգամաւորները միաժամանակ հարկաւոր համարեցին կանգ առնել վերջին արիւնահեղ ընդհարումների վրայ։ Աններելի չարամտութեամբ ընդհարման ամբողջ պատասխանատուութիւնը գցեցին հայերի վրայ, մոռացութեան տալով անհերքելի փաստերը—այրած գիւղերը, Թալանի և կրակի մատնուած տները, կոտորածն ու բռնի կրօնափոխութիւնը։ Փոխարքայ Վօրօնցօվ-Դաշկօվ, կողմնապահութեամբ տարուած, պաշտօնապէս յայտարարեց, որ ինքը կատարելապէս զոհ է մահմէտականներից, գնահատում է նրանց առաքինութիւնները և լաւ գիտէ, որ ընդհարումների պատճառը նրանք չեն։ Այդ պաշտօնական սուտը ընդհանուր ապշութիւն պատճառեց ամբողջ Կովկասին։ Թիւրք պատգամաւորները, մանաւանդ նրանք, որոնք շատ տխուր դեր են կատարել վերջին դէպքերի մէջ, խրոխտացած՝ կարծում են իրենց ազատ՝ շարունակելու Թալանի և կոտորածի քաղաքականութիւնը։ Փոխարքան դաւաճանեց իր պաշտօնին և պարտականութեան։ Այսօրուանից սկսած՝ պատասխանատուութիւնը ընկնում է ամբողջապէս նրա վրայ։

ԹԻՖԼԻՍ, 10 յուլիսի

Հաղորդում ենք ի գիտութիւն եւրոպական հասարակութեան այն յանդուգն ծրագիրը, որ կազմւած է Կ. Պօլսում, Կովկասի վերաբերմամբ։ Ձերբակալուած զաղտնի գրագրութիւնները, ինչպէս և Թիւրք դիակների վրայ գտնուած շրջաբերականները ցոյց են տալիս, որ սուլթան Համիդ, օգտւելով Ռուսաստանի այժմեան ծանր կացութիւնից, նախագծել է, համաձայն գերմանական օֆիցէրների կազմած յատակագծի, ներս խուժել Անդրկովկաս։ Ծրագրին տեղեակ Թիւրք ազդեցիկ անձինք կազմակերպեցին վերջին կոտորածը, նպատակ ունենալով ազատել երկիրը քրիստոնեայ տարրից և այդպիսով հեշտացնել օսմանեան տիրապետութիւնը։ Ծրագրւած է եղել—մի կողմ Թողնելով Կարսի բերդը, ներս խուժել Անդրկովկաս Բայազէտի կողմից, անցնել Երևան, վերցնել Նախիջևան, Ղարաբաղ, Բագու և հաստատել Դաղստանում, գրկելով ամէն տեղ մահմէտական ազգաբնակութիւնը, պատրաստ՝ Թիւրք զօրքի հետ միասին կռիւ մղելու ռուսական տիրապետութեան դէմ։ Այդ գաղտնիքի բացումը ցնցեց ռուսական զինւորական շտաբը։ Զինւորականութեան մի մասը այն կարծիքի է, որ պէտք է անպատճառ զինել հայ ժողովուրդը, դիմադրութեան համար, իսկ միւս մասը, ընդհառակը, պնդում է, որ հայկական նահանգները պէտք է գէթ առժամանակ տալ մահմէտական ֆանատիկոսութեան ձեռքը։ Վերջին սարսափները, կատարուած Նախիջևանի կողմերում, համարւում է այդ ծրագրի նախերգանքը միայն։ Հայ ժողովուրդը վճռել է մինչև վերջ կռւել այդ քաղաքական երկուստեք դաւադրութեան դէմ։

# ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ

## Զ.

## ՓԱ՛ՌՔ ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐՈՒՆ

Եւ այսպէս, ձեր արդարակշիռ և երկաթեղէն ձեռքերն անպարտելի,
Ձեր զինավառ ու կրակոտ կուրծքերէն կատաղաբար մեկնելով՝
Դաւադրութիւնն ու Մահը անողորմ հարուածով մը դէպի հողը կը մղձեն...
Ո՜հ, ի՜նչպէս մոռնալ ձեր Յաւակինն, ի՜նչպէս երգել, ի՜նչպէս ջատագովել, ի՜նչպէս չափորել զձեզ,
Դուք ինքնիշխան և գերագոյն դատաւորները բոլոր արիւնարբու բռնապետներուն...
Ու նոյնիսկ չեմ գիտեր ձեր զարհուրանքի և պակուցումի անուններն ահաւոր,
Որովհետև ձեր յաղթական անցքը Ճշմարտապետութեան ճամբուն վրայէն,
Այնչա՜փ արագ է, այնչա՜փ խորտակիչ, այնչա՜փ կուրցնող և այնչա՜փ աւերիչ
Որչա՜փ անցքը խաւարակուռ անտառներու մարմրող վայրկենական կայծակներուն...

Դուք մեր տառապանքին և մեր կռիւին երկարատև տարիներէն ի վեր,
Աննուաճելի պարիսպները հանդիսացաք մեր քայլերը կասեցնող բոլոր Թշնամիներուն հանդէպ՝
Եւ բռնակալութեան քաղաքներուն և անոնց հրապարակներուն վրայ,
Երբ մեր դիակը փողոտուելէն մեր տաք արիւնը կը հոսէր...
Ահաւասի՛կ որ ձեր խրոխտ հասակները միմիայն և հերոսաբար աշտարակուեցան...
Ձեր քայլերը մեռելապատ փողոցներուն մէջ Վրէժին աղաղակը գոռացուցին,
Ձեր սուրերուն հալածանքէն բոլոր դաւաճանները եղբայրսպաններուն հետ գերեզմանուեցան
Ու ձեր ճակատ ճակատի և անվեհեր ու անվախ ու հպարտ երևումէն,
Ծնրադիր խուժանը վախերուն՝ ձեր ոտքերուն կառչելով իրենց կեանքը հայցեցին...
Ու դեռ երէկ, ձեր ահաբեկչի ռումբերը մարդասպաններու թափօրներ մաքրեցին...
Բռնաւորները այդ խոլագնաց վեհմաններուն մէջ վար թաւալող արեգակներու նման պայթելով...

Այսպէս, ձեր արդարախոյզի արիւնաւէտ լապտերները ձեր ձեռքերէն առկախ,
Բոլոր խաւարչտին և եղեռնական հոգիներուն գոցուած դռներէն ներս խուժեցիք,
Ինչպէս խղճմտանքը, որուն ճշմարտագէտ նայուածքը փախճան մըն է միանգամայն...,
Դուք Օրէնքը եղաք եղեռնապաշտ Չարիքին ուսերուն վրայ հսկող,
Եւ հայրենի ամէն յուզում, ամէն խռովք, ամէն հեւ ու ամէն վրէժ,
Ձեր նժարին մէջ կշռուեցաւ և ձեր արդարապաշտ առեւմին սեղանին վրայ յայտնուեցաւ...
Դուք ո՛չ զինակիցներ ունեցաք և ո՛չ ձեր հաւատքին վրայ իշխողներ,
Դուք, — դուք ձեր անձն էիք անսահմանօրէն և ձեր արիութեւ հոգին,
Ձեր Եսը գերագոյն-մարդուն եսն է ամէն զօրութենէ գերիվեր,
Ձեր վճիռը ամէն վճռի մահավճիռն է անողոք,
Եւ վա՜յ անոնց, որոնք ձեր կարմիր և մահացու կնիքովը կը խարանուին...

Եւ մինչև այսօր մեր բոլոր թշնամիները առեւ անոր ձեր վրէժխնդիր զարհուրէին,
Արդարութեան ձայնն էր աստուածադոչ՝ ինչպէս ձայնը Ազատութեան,
Տեսա՛ն որ ձեր անխնայ սուրը, սուրն էր անխուսափելի ճակատագրին,
Տեսա՛ն որ ձեր դաշոյնները, մեղապարտ վիզերու ի խնդիր, նորէն կը շողան,
Տեսա՛ն որ ձեր բռունցքին հարուածներուն տակ մասնիչներուն կզակները կը կափկափեն...
Տեսա՛ն որ ձեր կապարէ գնդակները մարմինէ մարմին և ուղեղէ ուղեղ կ'անցնին...
Տեսա՛ն որ իրենց ծածրակներէն և սրահներէն, մեր ծարաւի աչքերուն առջև, իրենց արիւնն է որ կը ժայթքի,
Հեղեղօրէն, հեղեղօրէն, իրենց հեւասպառ գահակալներն ու մահացէմ թագակիրները թրջելով...
Տեսա՛ն որ իրենց սիրտերը կը ջախջախուին և իրենց ոսկորները կ'աղցուին,
Տեսա՛ն որ այն գլուխները որ գիշերներով մեր ցեղին անէացումը յղացան,
Տեսա՛ն որ ձեր պղինձէ կրունկներուն զօրութեանը տակ է որ կը խմորուին...
Տեսա՛ն որ այսպէս, քաղաքէ քաղաք և հրապարակէ հրապարակ,
Ձեր յանկարծական երեւումը, ձեր բազկահարուածը և ձեր յարուցած խռովքը անմեկին,
Բոլոր դաւաճանները գիտնոցուց, բոլոր փառքերը հողեց և մարդակեր ամբոխները քարացուց...

Բայց դեռ մի՜նչ պէտք է սպասենք, մի՜նչ պէտք է համասփռենք, մի՜նչ պէտք է մեռնինք,
Այն ստրկութեան և ամբարշտութեան չարաշուք պալատներուն վրայ,
Որոնց զնդաններուն տակ իբր հիմնաքար մեր ցեղին մասծումը և մարմինը և հոգին է որ կը հեւայ...
Որոնց որմերը մեր արիւնով է շաղախուած և մեր ոսկորներովը կառուցուած...
Որոնց աղբիւրները մեր անօգուտ արցունքներէն են առատ,
Եւ զինովութեան ու եղեռնի բաժակները, ձեռքէ ձեռք շրջող, մեր արիւնով առլցուած...
Մա՜հ պէտք է համասփռենք հոն, ուր մեր ատրուկի ծնրադիր պաղատանքները չի հասան.
Բայց ուր ձեր սուրերուն բոցը մարդասպանները սառեցուց և անոնց ակռաները զարհուրանքէ կրճտել տուաւ...
Մա՜հ այդ թագակիր, բայց արդէն ահաբեկեալ և կիսամեռ դահճապետներուն,
Վասն զի, իրենք, այդ արիւնկզակ և գիշահոտ բանուորները փախճանաւոր,
Զարհուրանքով լսեցին ձեր ձայնը, ձեր բարկութիւնը, ձեր ցասումը, ձեր զայրոյթը ահաւոր...
Եւ իրենց խորտակեալ և գագաղակերպ գահերը շարժեցան,
Ուժանակներու գոռումէն, ինչպէս գոռումէն փրկարար ամպերուն,
Ձեր վերահաս երեւումը իրենց սրտերը կը մահազանգէ և իրենց ոճրագործի ուղեղները կ'արիւնէ,
Իրենց կմախաձև ձեռքերը այլեւս մահուան սարսուռով է որ կը դողդոջեն...
Իրենց գիշերատարափ երազներուն մէջ ձեր անձը իր երկաթէ քինայոյզ քայլերով է որ կ'արշաւէ...
Եւ ահաւասիկ իրենց դարաւոր դուռները ահագնաբար պատէ ի պատ կը ծեծուին
Եւ ահաւասիկ իրենց պատուհաններուն բոլոր փեղկերը յառաջացող վտանգէն իրենց վրայ ահեղութեան մը փակուելով
Դուրսէն եկող ամէն յոյս կը չքանայ իրենց համար և խաւարին մէջ Մահն է որ անոնց հոգիէն ի վեր կը կառչի...
Ուրեմն ոտքի՛, նորէն ոտքի՛, նորէն ոտքի՛, Հայորդիներ, Դիւցազուններ, Ազատարարներ,
Ոտքի՛, և օդերուն մէջ, օդերուն մէջ թո՛ղ ցնդին, օդերուն մէջ թո՛ղ մոխրանան,
Մեր բանուորներուն ու պատժապարտ պալատներն արիւնաթոր՝ Եըլտըզ-Քէօշք և Չըրաղան է Սէլ...

ՍԻԱՄԱՆԹՕ

# ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐԻՒՆԱՀԵՂ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

## ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՅԵՐ

### ՈՒՇԻԻ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ
(ԱԿԱՆԱՏԵՍԻ ՊԱՏՄԱԾ)

Յունիսի 4-ին, առաւօտեան ժամը 5-ին, Հայկական Ի. Մեծ գիւղում հաւաքուել էին զինուած հինգ խմբեր և կազմում էին ընդհանուր գործողութեան յատակագիծ՝ պաշտպանելու համար ամբողջ Աբարանի և Աշտարակի շրջանները և վրէժխնդիր լինելու այն թիւրք գիւղերից, որոնք սկսել էին յարձակուել ու թալանել հայ գիւղերը։

Ընդհանուր ղեկավարն էր Արսէնը. խմբապետներն էին՝ Գրիգոր, 10 ձիաւորներով, Նորայր՝ 13 հետեւակներով, Յովհաննէս՝ 20 հետեւակներով, Արամ՝ 10 հետեւակներով և Բորսեղ՝ 19 հետեւակներով, ընդամէնը 78 զինուոր։ Բացի սրանցից կային զինուած կամաւոր գիւղացիներ, թւով՝ 40, բոլորը միասին մօտ 120 հոգի։

Հէնց խորհրդակցութեան միջոցին, ժամը 6-ին, լուր է հասնում, որ թիւրքերը յարձակուել են Սաղմոսավանք գիւղի վրայ. իսկոյն Բորսեղի խումբը առաջ է անցնում և ձորի հակառակ ափից, 1200 քայլ հեռաւորութեան վրայ, կռւի է բռնւում թիւրք խուժանի հետ։ Կէս ժամ չ'անցած, թիւրքերը կորցնելով 4 հոգի, յուսահատ յետ

են քաշւում: Բարսեղի խմբին միանում է և Յովհաննէսի խումբը: Երկու խմբապետները Սաղմոսավանքի դիրքն ու տեղական կռւող ուժերի քանակը ուսումնասիրելուց յետոյ, համոզւեցին, որ գիւղը կարելի է թողնել հէնց իրենց գիւղացիների պաշտպանութեան տակ և իրենք վերադարձան առաջւայ տեղը՝ այնտեղից աւելի օգնութեան կարօտ տեղերին հասնելու համար:

Դեռ կռւից վերադարձող խմբերը չհանգստացած՝ ընդհանուր համաձայնութեամբ, նոյն օրը ժամը 11-ին, բոլորը միասին մեկնում են Բայարջուխ գիւղը՝ Իլանչալանի պաշտպանութեան համար թողնելով Կարապետին իր 13 հետևակներով: Բայարջուխ հասնելուց կէս ժամ յետոյ տեղեկութիւն է գալիս, որ թիւրքերը անսպասելի մեծ քանակութեամբ նորից յարձակւել են Իլանչալանի և Սաղմոսավանքի վրայ:

Առանց վայրկեան կորցնելու բոլորը դէպի այն կողմն են շտապում. Ձիաւոր խումբը Բարսեղի հետ առաջ է անցնում, որպէս զի վաղօրօք բռնէ անհրաժեշտ բարձր դիրքերը: Կարապետն իր խմբով միացած գիւղացի կռւողներին՝ բռնում է Իլանչալանի հիւսիս-արևմտեան ոտքը: Այդ միջոցին թիւրքերն արդէն հասել էին գիւղի հարաւ-արևմտեան կողմը և շտապում դէպի լեռների բարձունքը: Նկատելով ձիաւոր խմբի ներկայութիւնը, որ անսպասելի էր, թիւրքերը կրկնապատկում են իրենց ճիգը, որքան կարելի է շուտ հասնելու լեռների տիրող դիրքերին: Բայց երբ երևան են գալիս հայ կտրիճների մնացած խմբերը, ցրւած այս ու այն կարևոր կէտերում, հինգ վերստ տարածութեան վրայ, թշնամին գլուխը կորցնում է և ակներև վտանգից խոյս տալու համար՝ Ուշի գիւղն է քաշւում, որի վրայ և յարձակւում են հայկական վրիժառու խմբերը:

Կռիւը սկսւում է ցերեկւայ 2 ժամին. Թշնամին ունէր մօտաւորապէս 200-250 հրացանաւոր: Հայ կտրիճները կռւելով առաջ են գնում: Եւ մինչ քիչ էր մնում, որ օղակի մէջ առնէին թշնամուն, լուր է հասնում, որ գաւառապետը կօզակներով Աշտարակից դէպի տեղն է գալիս: Խմբապետները որոշում են լաւ դիրքեր բռնելուց յետոյ՝ դադարեցնել կռիւը, գաւառապետի և կօզակների շարժումներին հետևելու համար. շուտով լուր է գալիս, որ գաւառապետը տեղեկութիւն չունի այդ կռւի մասին և թէ նա գնացել է Էջմիածին: Վերջին հանգամանքը սիրտ է տալիս հայերին և նրանք ուժով վրայ են տալիս Ուշիին: Թշնամին շփոթւում է և սկսում փախչել, մանաւանդ քիւրդերը, որոնք թշնամու ձախ թևն էին կազմում:

Հայերը քանի մօտենում էին գիւղին, այնչափ խտանում, մերձենում էին միմեանց: Երբ հասնում են գիւղ, միւս կողմից անսպասելի կերպով ներս է խուժում Կարօն՝ 40 զինւած կտրիճների հետ: Սրանք նախօրօք երկու ժամ կռւել էին, որպէս զի կարողանան բռնել Կարբին Ուշիից բաժանող լեռների գագաթները: Բայց յանկարծ մի աներևոյթ ձեռքով ճանապարհը մաքրւած են գտնում ու ուղղակի դիմում Ուշի. նրանք տեղեկութիւն չունէին միւս կողմի կռւի մասին. հէնց այդ հանգամանքը, որ երկու հայ խմբերը միմեանց մասին տեղեկութիւն չ'ունէին, առիթ տւեց մի թիւրիմացութեան: Արսէնի հրամանատարութեան տակ եղած հայ զինւորները հեռուից նկատելով մօտեցող կամաւորներին, նրանց թիւրքերի տեղ են ընդունում և մի քանի խմբական հրացանաձգութիւն կատարում նրանց վրայ. բարեբախտաբար թիւրիմացութիւնը շուտով պարզւում է և կամաւորներից ոչ մէկը չէ վնասւում. . .

Ուշին այդ միջոցին շրջապատւած էր երեք կողմից: Ուշիից վեր, դէպի աջ, կայ մի նեղ անցք, Ս. Սարգսի ճամբայ անունով, որի մասին հայ խումբը գաղափար չ'ունէր, ուստի և չէր կարողացել բռնել այդ ուղին: Ընդհանուր շփոթութեան մէջ թիւրքերը օգտւելով այն հանգամանքից, որ հայերը չգիտէին այդ ճանապարհի գոյութեան մասին, փախչում են այդ գծով, թողնելով գիւղը հայերի ձեռքին: Հայերը, հետևելով „ակն ընդ ական“ սկզբունքին, գիւղը կրակի մատնեցին:

Այդ միջոցին մի տան մէջ պատսպարւած էին եօթ զինւած թիւրքեր: Հայերը պահանջում են անձնատուր լինել, նրանք մերժում են: Ուստի հայ քաջերից մէկը կտուրը բարձրանալով՝ նետում է մի ռումբ, որին զոհ են գնում բոլորը:

Կռիւը վերջացաւ ժամը $8^1/_2$-ին երեկոյեան, երբ արդէն արևը մայր էր մտնում: Հայերը գիւղին բոլորովին տիրանալուց յետոյ, քաշւեցին իրենց տեղերը: Այնտեղ ստուգւեց, որ իրենցից ոչ ոք չէ սպանւած, միայն մի զինւոր անզգուշութեամբ ինքն իրեն վիրաւորել էր: Կռւի միջոցին Ուշիում միայն մի հայ գիւղացի էր սպանւել: Թշնամին ունեցել է 150 սպանւած և 180 վիրաւոր, որոնց կէսը ծանր: (Այս տեղեկութիւնը քաղւած է Երևանից եկած ռուս բժշկի պաշտօնական ցուցմունքից):

Շրջակայքի թիւրքերը սարսափած այս դասից, բոլոր գիւղերը թողել և համախմբւել են երեք կէտերում. մի մասը Ախտում, երկրորդ մասը Քանաքեռի մօտ գտնւող դաշտում և այնտեղից կառավարութեան պաշտպանութիւնն են խնդրում, երրորդ մասը Վաղարշապատի մօտ:

Երբ հայ գիւղացիները լսում են Ուշիի կործանումը, առանց խմբապետներին հարցնելու՝ յարձակւում են թիւրք գիւղերի վրայ և մի մասը ոչնչացնում. . .

Երկրորդ օրը, յունիսի 5-ին, կօզակները շրջապատում են մի խումբ անզէն հայ գիւղացիների, նրանց վրայ հրացաններ են արձակում, սպանում 4-ին և ապա բոլորին բռնելով՝ յայտարարում են, որ դրանք են Ուշին աւերողը. մինչդեռ նրանց ձեռքին ոչ զէնք կար և ոչ կողոպուտ: Նրանք միայն դուրս են եկած եղել փնտրելու իրենց կորսւած անասունները: Երրորդ օրը նոյն Ուշիի մօտ կօզակները բռնում են մի քանի հայ գիւղացիներ, որ վարելիս են եղել իրենց հողերը, և լաւ ծեծելուց յետոյ տանում են քաղաք:

Կառավարչական զինւորների այդ անտեղի խստութիւնը դէպի հայերը, ծանր ճնշում է թողել ամենուրեք: Հակառակ այդ հանգամանքի՝ հայ ժողովուրդը վճռել է պաշտպանւիլ, դարձեալ մի անգամ համոզւած, որ հաշտութեան վրայ յոյս դնելը ցնորք և միամտութիւն է:

---

Թիֆլիս, 2 յունիսի

Ստացւել են Ջահուկ գիւղի կատարածի մանրամասները: Ահա թէ ինչպէս է նկարագրում այդ՝ ականատեսներից մէկը:

„Մայիսի 12-ին, առաւօտեան, դատարանի առաջ խմբւել էին գիւղի հայերը և թիւրքերը, որոնցից առաջինները խորհրդակցում էին գնալ դիմել նոր ժամանող փոխ-նահանգապետին՝ թիւրքերի յուզւած մտքերը խաղաղացնելու և սպառնացող վտանգի առաջն առնելու համար: Գիւղի տանուտէրը և մեր հարևան Ասադ Հաջի-Մ'բիլ-Կասում-օղլին մեզ ասացին. „Ամօթ է մեզ համար. գնացէք, խանութներդ բաց արէք»

Միևնոյն ժամանակ նա խոստացաւ. 1) Միջնորդել, որ փոխարքան թոյլ տայ ամեն մի վնասուած գիւղին պահել մի քանի հրացաններ՝ ինքնապաշտպանութեան համար. 2) Կալանաւորել իր չարագործութեամբ յայտնի Ջահրիի տանուտէրին: 3) Տալ նիւթական օժանդակութիւն նախնական կարիքների համար: Կարծիք կայ, որ Պրինց Նապոլէօն հրապարակ պիտի բերէ գեներալ Ալիխանովի գործած ոճիրները, և պաշտպան պիտի կանգնի խաղաղ ժողովրդին, եթէ Թիֆլիսից՝ փոխարքայի կողմից հակառակ հրահանգներ չստացուին *):

Թիֆլիս, 30 յուլիսի

Շուշուց եկող լուրերը ցոյց են տալիս, որ Թիւրքերը այնտեղ զգոյշ են պահում իրենց: Երևանի դէպքերից յետոյ նրանք այն կարծիքի են, որ հայերի հետ լինելիք ընդհարումը իրենց շատ թանկ կարող է նստել: Ընդհանուր կարծիք կայ, որ ոստիկանութեան և պանիսլամիստների դաւերը աջողութիւն չը պիտի ունենան:

Թիֆլիս, 30 յուլիսի

Գեներալ Ալիխանովի Նախիջևան ուղարկելը եղաւ մի մեծ չարիք: Նա խրախուսեց Թիւրք խուժանը՝ սիրտ տալով ոճրագործ խաներին: Վօրօնցօվ-Դաշկովի՝ այդ քայլը համարում է ամենամեծ ապացոյց՝ որ նա ունի գաղտնի դիտումներ: Կոյր պէտք է լինել, չհասկանալու համար, որ Նախիջևանի խաների բարեկամ Ալիխանովի ուղարկումը՝ մի աշխարհ խրախուսանք էր պանիսլամիստների համար:

Երևան, 30 յուլիսի

Քաղաքում լուր է պտտում, որ Կոմս Տիզենհաուզէն ազատ չէ իր գործողութիւնների մէջ: Թիֆլիսից նրա վրայ ճնշում են գործ դնում: Հակառակ դէպքում նահանգապետը հէնց սկզբից կարող էր ոչնչացնել պանիսլամիստ ագիտատորների ազդեցութիւնը: Վատ դեր են կատարում նոյնպէս և մի քանի ռուս չինովնիկներ, որոնք իրենց հայատեացութեամբ թոյլ չեն տալիս նահանգապետին՝ զսպելու ոճրագործութիւնը:

Թիֆլիս, 30 յուլիսի

Փոխարքայ Վօրօնցօվ-Դաշկօվ մերժեց հայերին զէնք տալու խնդիրը: Հայ ազգաբնակութիւնը չի խնդրում Կառավարութիւնից ոչ զօրք և ոչ էլ պաշտպաններ, այլ միայն իրաւունք զէնք կրելու և զէնք չեղած տեղում՝ հրացաններ ինքնապաշտպանութեան համար: Կառավարչական շրջաններում շատ լաւ են համոզուած, որ այս միակ միջոցն է խաղաղութիւնը վերահաստատելու համար, բայց և այնպէս հայերին զէնք տալու միտքը հանդիպում է մեծ թշնամութեան պաշտօնեաների կողմից: Թիւրքերը այդ հանգամանքից աւելի են սիրտ առնում:

## ՆԱԽԱՄՏԱԾՈՒԱԾ ԾՐԱԳԻՐԸ

(ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ)

—

Թիֆլիս, 14 յունիսի

Կառավարութեան ստեղծած դժոխային վիճակը շարունակւում է: Օրէցօր աւելի և աւելի պարզւում է այն ծրագիրը, որի համեմատ տեղի ունեցան արիւնոտ դէպքերը: Խնդիրը բարդ է և խճճուած:

Կան զանազան ֆակտօրներ: Ամենից առաջ Գօլիցինի կառավարութիւնն էր, որ ծրագրեց թուլացնել հայ տարրը, նրա դէմ հանելով տգէտ և ֆանատիկոս մահմէտական խուժանը, բայց գլխաւորապէս Թիւրք (Թաթար) և քիւրդ տարրը: Կիսախելագար հրէշը հետևեալ մտածումն է ունեցել.—Թիւրքերին թոյլ կըտանք զինաւորուիլ, նրանց կը գցենք հայերի ջանին, իսկ յետոյ նրանց կը զարկենք մեր զօրքով, եթէ չեն բաւականանայ հայերով կամ այլ ինստինկտներ կ'արտայայտեն: Գօլիցինը կամեցաւ ստեղծել միայն հ ա կ ա-հ ա յ կ ա կ ա ն շարժում, բայց ստեղծելով այդ շարժումը՝ նա չկարողացաւ ըմբռնել, որ դրան կը հետևի հ ա կ ա ք ր ի ս տ ո ն է ա կ ա ն գուցէ և հ ա կ ա պ ե տ ա կ ա ն շարժում: Եւ այսօր, երբ հակահայկական շարժումը փոխւում և դառնում է հակաքրիստոնէական, սպառնալով հակապետական ուղղութիւն ևս ընդունել, նոր են աչքերը բաց անում, զգում վտանգը և տեսնում, որ դժւար է հանգցնել բռնկւած կրակը:

Ահա մի քանի մանրամասներ այդ մասին: Նախ քան Գօլիցինի ծրագիրը, Բագւում կազմւում է պանիսլամական կազմակերպութիւն, շնորհիւ Կ. Պօլսից եկած էմիսարների պրօպագանդայի: Այդ կազմակերպութիւնը, որի ղեկավարներն են գլխաւորապէս „Կասպի“ լրագրի գործողները, իրեն նպատակ է դնում միացնել երկրի շիա և սիւննի մուսուլմաններին, աշխատելով նւաղեցնել կամ քշել Անդրկովկասից քրիստոնեայ տարրերը և հեշտացնել նրա նւաճումը, երբ կըստեղծւեն քաղաքական նպաստաւոր հանգամանքներ: Այդ կազմակերպութիւնը ղրկում է Մաքուի ու Նախիջևանի խաներին միանալ իր հետ, պարզելով նրանց առաջ յոյսը՝ վերստին գրաւելու Նախիջևանի խանութիւնը և անկախութիւն ձեռք բերելու: Կազմակերպութիւնը, ինչպէս երևում է, զինման գործը մեծ եռանդով առաջ է տարել տարիների ընթացքում Մաքուի ու Նախիջևանի խաների միջոցով, որովհետև այժմ հաստատուած է, որ Արաքսի մօտ „ուտէլ“ կայսերական „Արազիանա“ մեծ կալւածում (10 հազար դեսիատին) կառավարիչը, որ մի Թիւրք է, հաստատել է զէնքի կենտրօնական պահեստ, տեղը շատ ապահով, որովհետև ոչ մի ոստիկանութիւն այդտեղ մուտք գործել չէր կարող, նամանաւանդ որ Նախիջևանի գաւառի պրիստաւները Թիւրքեր են և Նախիջևանի խաների ազգականները: Մաքուի խանութիւնից ահագին քանակութեամբ զէնք են փոխադրում այդ կալւածը և այդտեղից տարածում ամեն տեղ:

Երբ Բագւի կոտորածները միանգամայն համոզել Թիւրքերին, որ ռուս կառավարութիւնը ոչ մի արգելք չի ցոյց տայ, ծրագրւեց հայ տարրի ջնջումը Երևանի նահանգում և Ղարաբաղում: Այդ ծրագրի իրագործման գլուխ կանգնեցին Նախիջևանի խաները, գլխաւորապէս Ջաֆար ղուլի խանը և Րահիմ խանը: Սակայն Ղարաբաղի բէկերը — Ղարաբաղի խաների ժառանգները — չհամաձայնեցին յարել ծրագրին և այդ պատճառով Գանձակի նահանգը առայժմ զերծ է պատուհասից: Գոնէ Ղարաբաղի բէկերը յայտնել են, որ նրանք թոյլ չեն տայ Ղարաբաղում յարձակւում Թուրքերի կողմից:

Որ Նախիջևան գաւառի կոտորածների ղեկավարները Նախիջևանի խաներն են և որ ներկայ շարժումը համիսլամական բնաւորութիւն ունի, դա կարելի է համարել անկասկածելի: Բերենք մի քանի փաստեր.

1) Երբ Խ ա ն լ ո ւ խ լ ա ր գիւղը պաշարւած էր հրոսակներով, ժողովրդին օգնութեան եկած զօրքի ղեկավարները պարզ տեսան, որ մահմէտական խուժանի պարագլուխները ֆէս ունէին, կարմիր թևքեր, Մարգարէի սև դրօշակը, որի վրայ „ջհատ“ էր գրւած և բացի դրանից պրօկլամացիոններ՝ կոտորելու անհաւատ քրիստոնեաներին և տարածելու իսլամը: 2) Տեղացի խուժանի հետ միասին կռւում էին և զէնքի վարժւած մարդիկ, ինչպէս երևում է „համիդիէներ“, ուղարկւած Թիւրքիայից: 3) Մի պրօկլամացիոնի մէջ ասւած է եղել, թէ պէտք է կոտո-

*) Մեր ստացած յետագայ տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ այդ խոստումները անամօթ միստիֆիկացիա են եղել:

րել հայերին, որովհետև նրանք էին, որ 100 տարի առաջ իսլամի տիրապետութեան տակ գտնւող երկիրները — Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի խանութիւնները — ռուսների տիրապետութեան ենթարկեցին։ 4) Թիւրքերը չեն բաւականանում հրդեհով, կողոպուտով և սպանելով, այլ առանձին հաճոյքով պղծում են եկեղեցիները, անարգում սրբութիւնները, ստիպում հայերին իսլամութիւն ընդունել։ Բասամլու գիւղում ստիպել են 800 հայերի քահանայի հետ մուսուլման դառնալ, ածիլելով տղամարդկանց, թլպատելով երեխաներին և բռնաբարելով կանանց։

Ինչպէս յայտնի է, շարժումը սկսեց մայիսի 8-ին և 12-ին տեղի ունեցաւ Նախիջևանի կոտորածը։ Այնուհետև նա տարածւեց ամբողջ գաւառում և այնտեղից անցաւ Շարուր և այլ գաւառներ և եթէ չլինէին վերջին օրերի դիմադրութիւնը հայերի և մի քանի տեղ էլ զօրքի կողմից, շարժումը կը տարածւէր ամբողջ Անդրկովկասում։ Լուր եկաւ, որ Ջիբրայիլի կողմից (Խուտափերին կամրջի կողմից) 2,000 զինւած մահմէտականներ պատրաստւում են անցնել Արաքսը։ Մաքուի կողմից ևս մեծ թւով զինւած քիւրդեր անդադար անցնում են սահմանը, վերսկսելու խլրտումները։

Կայ մի այլ, երկրորդական ծրագիր ևս. — Հայերին կոտորել կամ ստիպել գաղթել ուրիշ տեղեր և նրանց հողերին տիրանալ։ Եւ տարաբախտաբար հայերի գաղթականութեան հոսանքը Նախիջևանի գաւառից արդէն սկսել է։ Յունիսի 12-ին 100 ընտանիք հասաւ Թիֆլիս։ Եթէ չկարողանանք այդ հոսանքի առաջն առնել, Նախիջևանի գաւառը ամբողջովին պիտի դատարկւի հայերից։

Նախիջևանի գաւառում աւերւած են 25 գիւղեր և սպանւածների թիւը հասնում է 400-ի։ Նախիջևանում՝ 48 հոգի, Ջահուկ՝ 51, Հաջիվար՝ 9, Մամարզա՝ 5, Թմբուլ՝ 19, Նորս 50 և լն։ Կողոպուտը, թալանը, նիւթական վնասը ահագին է։ Նախիջևան քաղաքի 182 հայ խանութներից մնացել են չորսը միայն։ Դաշտերում ցանքերը փճացրւել, տնակոխ են եղել և այս ձմեռ սպառնում է սով։

Կատաղած այդ անլուր բարբարոսութիւնից՝ հայերը համբերութիւնից դուրս եկան և վճռեցին արեանը արեամբ պատասխանել։ Երևանի գաւառում հայ զինւած ուժերը աւերեցին 12 թիւրք գիւղ և շատ տեղերում լաւ դաս տւեցին թիւրքերին, առանց գործելու, իհարկէ, այն սոսկալի անգթութիւնները, որ թիւրքերին է յատուկ, այն է՝ կանանց ծծերը կտրել, արգանդը պատռել և երեխան հանել, մերկացնել, բռնաբարել աղջիկներին, կրօնական անօթները պղծել և լն։

Ի՞նչ էր անում այդ բոլոր ժամանակ ռուս կառավարութիւնը, կը հարցնէք. ի՞նչ էր անում նոր փոխարքան, Վօրոնցօվ-Դաշկօվ, որ Կովկաս եկաւ այնքա՜ն մեծ խոստումներով, բայց որը րէֆօրմների փոխարէն՝ բերեց արիւն և արտասուք. այդ մասին յաջորդ նամակով։

22 յունիսի

Երկրորդ օրն է, ինչ քաղաքի դրութիւնը բոլորովին փոխւած է։ Գործարանները կանգնած են, էլէկտրաքարշերը դադրած և համարեայ բոլոր խանութները փակ։ Գործադուլ անողները ուզում են մինչև անգամ քաղաքի ջուրը կտրել։ Մնում են բաց հացի խանութները, բայց կարող է պատահել, որ նրանք էլ փակւեն։ Փողոցներում շրջում են անընդհատ զինւորների և կօզակների խմբեր։ Գիշերը իւրաքանչիւր ոստիկան շրջապատւած է մի քանի զինւորներով,— դողում են ահաբեկիչներից։ Գործադուլ հրատարակելու գլխաւոր պատճառը այն է, որ ոստիկանութիւնը ժողովներ ցրւելով, բացարձակ սկսել էր զինել „Հայրենասիրական Միութիւն" կազմող ռուս բանւոր-խուլիգաններին։ Ապաւինած ոստիկանութեան ուժին, այդ „հայրենասէրները" յանդգնել էին նոյն իսկ տէռօրներ կատարել կազմակերպւած բանւորներից մի քանիսի վրայ։ Ահա թէ ինչու բանւորների գլխաւոր պահանջն է՝ զինաթափ անել խուլիգաններին և ոստիկանութիւնը դնել քաղաքի հսկողութեան ներքոյ և կազմել քաղաքային միլիցիա։

Կայարանի մօտերքը շարունակ խուզարկութիւններ են լինում։ Գտել են 35 ատրճանակ, մի քանի հրացան և ռումբեր։ Գիշերները կարծես թէ ոտով շրջողներին յանկարծակի բռնում և խուզարկում են, իսկ քաղաքի ծայրերում նոյն բանը անում են և օր ցերեկով։ Ամէնքը լարւած դրութեան մէջ են։ Յաճախ լուրեր են պտտում, որ ռուս խուլիգանները, միացած թիւրք սրիկաների հետ յարձակւում են գործելու հայերի վրայ։

27 յունիսի

Դրութիւնը աւելի սարսափելի է դառնում. ամէն օր արիւն, կոտորած։ Ամէն ինչ կանգ է առել։ Փողոցներում խուզարկութիւնները աւելի են սաստկացել։ Երէկւանից սօց.-դէմօկրատները (Փոքրամասնութիւն) սկսել են գործունէութիւն ռումբերով։ Մինչև այժմ գցել են 5 ռումբ։ Սպանւած են ոստիկաններ, կօզակներ. վիրաւորները շատ են. սրանց թւում է և յայտնի հայատեաց պրիստաւ Գլէբօվը, որը կազմակերպում և զինում էր թիւրքերին։

Փոխարքայի օգնական Շիրինկինը, որն է իսկապէս Կովկասի կառավարիչը, կանչել է քաղաքագլխի պաշտօնակատար Զեյլբեզովին և սպառնացել է թնդանօթի բռնել քաղաքը, եթէ այդ արիւնոտ գործադուլը կանգ չառնէ։

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

## ՆՈՐ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վան, 15 ապրիլի

Երկրի կացութիւնը վերին աստիճանի նեղ է. սովը տիրապետող համարեա բոլոր խաւերին։ Կառավարութիւնը օգուտ քաղելով այդ հանգամանքից, սկսեց „աչքակապուկ" խաղալ։ Բարեգործութեան դիմակի տակ չարիքներ ստեղծելը այս երկրի համար օրէնք է։ Մի ամիս առաջ լուր տարածւեց, որպէս թէ կառավարութիւնը քաղցած ժողովրդեան նպաստներ բաժնելու բարի ցանկութիւնն ունի։ Եւ կատարւեց նպաստի բաշխման գերաշխարհային հանդէսը, լի թիւրք վարչութեան բազմատեսակ խաղերով։ Ամէն մի ընտանիքի պիտի վճարւէր հինգ դահեկանի պէս մի մեծ գումար։ Արդեօք սա էլ մի ծաղր չէ՞ քաղցած ժողովրդեան։ Բայց դա դեռ բոլորը չէ։ Ամէն մի ընտանիք պարտաւոր է ունենալ իր կնիքը, որպէս զի ստացականների տակ զարնէ իր մէօհրը։ Խեղճ գիւղացին պարտաւորւեցաւ 100 փարայի մի կնիք շինել տալ, ուրեմն իր ստացած նպաստի—5 դահեկանի

կէսը պիտի յատկացւէր գործառնութեան վաւերացման։

Բայց պարզւեց, որ դա ոչ թէ նպաստ էր, այլ բանկային փոխառութիւն, որի դիմաց գիւղացին գրաւ պիտի դնէ իր արտերը. գուցէ և մի այլ նպատակի ծառայէ այդ չարագուշակ հինգ ղուրուշը։

Հայոց Ձորի, Թիմարի և մի քանի գաւառների ժողովուրդը, չհասկանալով բանը ինչումն է, ընդունեց. ռշտունցիք, մոկացիք և կառկառցիք մերժեցին բացարձակապէս։ Ուրեմն գնդակը միայն մասնակի նպատակին հասաւ։ Այս օրերս Ոստանի գայմագամութիւնը ազատ արձակեց Նարեկի դէպքի յայտնի ոճրագործներին. Վերկոնիսայ չէյխ Ռաշիտի լամուկը, որ յայտնի բարբարոս է Ռշտունիքում և որը Նարեկի մէջ ամենամեծ դերն է կատարել, ազատ արձակեցին, որպէս միանգամայն անմեղ Նարեկի խնդրում։ Նոյն դէպքի մէջ յայտնի եղած Աւանին, որ մինչև հիմա փախստական վիճակ ունէր, Ոստանի գայմագամութեան կողմից ազատութիւն շնորհւեց, ի խրախոյս իր կատարած ոճիրների։

Նարեկցի Բադալ անուն անձը, որպէս քաղաքական յանցաւոր դատապարտւած է. Խալիլ էֆ. վկայել է, որ ոստիկան Աբդիւլ Համիդի սպանողը Բադալն է և ինքը այդ տեսել է 3-4 քայլ հեռաւորութիւնից։ Զարմանալի բան. 18 նարեկցիներ հրապարակօրէն սպանող քրդերն ու ոստիկանները անմեղ են ճանաչւում, իսկ մի ոստիկանի համար — որի սպանողն անյայտ է — քաղաքական յանցաւոր են գտնում նոյնիսկ Ամերիկայում։ Նարեկցի Արսէն անուն երիտասարդը, որ դէպքից երկու ամիս առաջ Ամերիկա էր գնացել 8-10 տարւայ բանտարկութեան դատապարտւեց։ Մոխրաբերդ գիւղի Ռափայէլ վարժապետի համար, որ փախստական է, նոյնպիսի բանտարկութեան վճիռ է արձակւած։

Ներկայիս Ռշտունիքի երեք գիւղերում զօրք է դրւած։ Նոր-գիւղ 40, Նարեկ 18 և Փախնէր 40 զինւոր։ Փախների մէջ զօրքերը Մանուկ անուն սրիկայ անձի միջնորդութեամբ բռնաբարել են մի քանի կանանց, որոնց անունները անկարող եղանք ձեռք բերել։ Նոր-գիւղ և Նարեկ սարսափելի բռնութիւններ են գործ դրւում. ծեծում են, գոմերի մէջ բանտարկում են, կաշառք են առնում։ Կարճկանի Մուսա բէյը վերսկսել է իր վայրագութիւնները։ Մարտի վերջերին նրա հրահանգով՝ իր մարդիկը յարձակւել են նոյն գաւառի Սորբ գիւղի վրայ՝ մի քանի յայտնի մարդկանց սպանելու. տղամարդիկ գիւղից փախչում են, ու քիւրդերը ձեռք ձգելով անտէր մնացած կանանց՝ բռնաբարում են առանց հասակի խտրութեան։ Նոյն բէյը սպառնում է գաւառի բոլոր յայտնի մարդկանց կեանքին, որոնք չտանելով Մուսա բէյի անսահման լլկանքները, միւդիրութեան պաշտօնից ձգեցին նրան՝ կուսակալին աղերսագիր ներկայացնելով։

Թողնենք քրդական բարբարոսութիւնները, դառնանք եւրոպական հիւպատոսներին։ Ֆրանսիական հիւպատոսը տասն օր առաջ ցանկանալով գնել Աղթամարի կաթողիկոսարանի ձիերից մէկը, կառավարիչը իսկոյն ձին ղրկում է նրան և գինը յայտնում։ Հիւպատոսը երկու մէճիտիէ նւէր է տալիս ձին տանողներին ու հեռացնում։ Երեք օր վերջը կաթողիկոսարանը դրամական նեղութիւն ունենալով, մի գրութեամբ ձիու գինն է խնդրում։ Հիւպատոսը զայրացած՝ յետ է խլում իր նւիրած երկու մէճիտիէն և քակել տալով ձիու պայտերը, ծեծել է տալիս կաթողիկոսարանի մարդկանց, դուրս վռնդում և սպառնալով կաթողիկոսարանին, անմիջապէս վազում է կուսակալի մօտ։ Նրանց մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը անյայտ է. այսքանը միայն գիտենք, որ Ատհամ բէյ, խլելով ձին՝ նորից ղրկում է հիւպատոսին։ Վճարի տալը անյայտ է։ Տանջւած ժողովրդին այդ տեսակ դէպքեր էին պակաս։

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՎԷՃԸ
## ԴԵԼԿԱՍԷԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Դիւանագիտութեան ոճրագործ խաղերի շնորհիւ՝ մի նոր փոթորիկ է սպառնում այսօր քաղաքակիրթ աշխարհին, մի նոր պատերազմ, որի պատճառած արհաւիրքներից երկար ժամանակ չի կազդուրւի արևմտեան քաղաքակրթութիւնը։

Բարեբախտաբար, ընդհարումը առայժմ զուտ դիւանագիտական բնոյթ ունի միայն և մեծ յոյսեր կան, որ Մարոկկոյի առթիւ ստեղծւած ճգնաժամը չի սրւի մինչև այն աստիճան, որ Ֆրանսիան և Գերմանիան, բոլոր խաղաղ միջոցները սպառելով՝ դիմեն, ինչպէս ասում են, ultima ration-ին, վերջին միջոցին — թնդանօթին... Հրդեհը այդ դէպքում պիտի տարածւէր, հաւանականօրէն, Մեծ Բրիտանիայի վրայ ևս, որը չափազանց շահագրգռւած է ֆրանս-գերմանական հակամարտութեամբ և որին չափազանց մտատանջում է Գերմանիայի զինւորական հմայքի արագ աճումը։

Մարոկկօն դառնում է երկրորդ Թիւրքիա, մի նոր կռւախնձոր, միջազգային սուր մրցակցութեան մի ահաւոր կրկէս։ Ներկայ ծանր ճգնաժամի մէջ՝ անգլօ-գերմանական հակառակութիւնը աւելի մեծ դեր ունի, քան ֆրանս-գերմանականը։ Եւ այդ հանգամանքների պատճառները խոր են, նրանց պէտք է փնտրել ոչ Մարոկկոյում։

*

Տրանսվալեան պատերազմից յետոյ Անգլիան փոքր ինչ խելքի եկաւ և նպատակ դրեց ոչ այնքան նոր-նոր նւաճումների քաղաքականութիւնը, որքան հների պահպանումը։ Պէտք էր ամրացնել ու ապահովել գաղութային տիեզերական պետութիւնը, որ վաղուց բոլորի նախանձն է շարժում և որի հսկայական տարածութեան վրայ, ինչպէս ասում են, արևը երբէք մայր չէ մտնում։ Պէտք էր ապահովել նրան երկու սպառնացող մեծ ուժերի դէմ, — Ռուսաստանի և Գերմանիայի։ Ռուսաստանը սպառնում է նրան Ասիայում, Գերմանիան՝ ծովերի վրայ։ Վերջինը, ըստ երևոյթին, աւելի խոշոր հակառակորդ է յայտնւում Բրիտանական քաղաքագէտների աչքում։ Իր աշխարհածաւալ առևտրով ու արդիւնաբերութեամբ և իր յարաճուն նաւային ուժերով՝ նա հանդիսանում է „ծովերի թագուհու“ ամենաահարկու ախոյեանը, որ աչք է դրել նրա ընդարձակ, հարուստ գաղութների վրայ և յաւակնութիւն ունի ժառանգելու նրա համաշխարհային տիրապետութիւնը։

Ռուսաստանի յարձակողական ուժը չէզոքացնելու համար՝ Անգլիան դաշն կապեց 1902 թւին Եապոնիայի հետ, որով նա պարտաւորւում էր օգնութեան հասնել իր դաշնակցին, եթէ այդ վերջինի վրայ յարձակւեն՝ գործին մէկից աւելի ցամաքային պետութիւններ (դիցուք, Ռուսաստանի հետ Ֆրանսիան)։ Մենք այժմ արդէն տեսնում ենք այդ նշանաւոր դաշինքի առաջին հետևանքները, — Ռուսաստանի մեկուսացումն ու տապալումը՝ հզօր ու յաղթական Եապոնիայի առջև։ Անգլիայի դէմ այլևս հնարաւոր չէ ռևէ եւրոպական նիզակակցութիւն։

Գերմանիային սանձահարելու համար՝ Անգլիան ձգտեց նախ և առաջ շահել Ֆրանսիայի բարեկամութիւնը։ Եւ այդ ճանապարհի վրայ նա հանդիպեց մի մարդու, որ միևնոյն ձգտումն ունէր՝ թուլացնել Գերմանիայի ուժը, ըստ կարելւոյն կղզիացնել նրան, հեռացնել նրա ազդեցութիւնը

լատին ցեղերից, հարուած տալով եւրոպական դաշնակցութեանը: Անհրաժեշտ էր Անգլիային բարեկամանալ միջերկրական այն պետութիւնների հետ, որոնք ընկած են նրա ծովային հաղորդակցութեան գծերի վրայ,—Ֆրանսիայի, Իտալիայի, Սպանիայի, Պորտուգալիայի հետ: Բրիտանական քաղաքականութեան նպատակը չէր յարձակողական դաշնակցութիւններ կազմել, այլ միայն մասնակի համաձայնութիւններ՝ իր հաղորդակցութեան մեծ ճանապարհը ապահովելու համար:

Այդ ճանապարհի վրայ է ընկած և աֆրիկական Մարոկկօն: Լինելով սահմանակից ֆրանսիական Ալժիրին, այդ բանապետութիւնը, իր ներքին անիշխանութեամբ, վայրենաբարոյ, խուժդուժ ցեղերի մշտնջենական շարժումներով ու ապստամբութիւններով՝ լուրջ վտանգ է ներկայացնում ֆրանսիական գաղութի խաղաղ ու նորմալ բարգաւաճման համար: Այդ պատճառով Ֆրանսիան, բոլոր միւս պետութիւնների շարքում, ամենից աւելի է շահագրգռուած Մարոկկօյի ճակատագրով, նրա ներքին կարգով ու խաղաղութեամբ:

Բրիտանիան պատրաստ է յանձնել Մարոկկօն Ֆրանսիային և առհասարակ լատին ազգերին, վստահ լինելով նրանց բարեկամութեան վրայ, բայց նա միանգամայն դէմ է աշխարհագրական այդ վտանգաւոր դիրքում ուէ զիջում թոյլ տալու իր ծովային ախոյեան Գերմանիային, որը սաստիկ փափագում է մի նաւահանգիստ ունենալ այնտեղ: Ահաւասիկ խնդիրներ, որոնք չափազանց կնճռոտում են Մարոկկօյի շուրջը ստեղծուած տագնապը:

Գերմանիան ուշիուշով հետեւում էր երկու պետութիւնների կողմից իր դէմ լարուող դաւերին, իրեն մեկուսացնելու յամառ ձգտումներին, որով տոգորուած էր մանաւանդ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դելկասէ: Եւ երբ կայացաւ անգլօ-ֆրանսիական հաշտարար համաձայնութիւնը, երբ յայտնուեց, որ այդ համաձայնութեամբ Ֆրանսիան իր բացառական հովանաւորութեան տակ է առնում Մարոկկօն և ստանձնում էր այնտեղ ռէֆորմներ մտցնելու պաշտօնը, առանց անգամ խորհրդակցելու Գերմանիայի հետ, որը նոյնպէս ունէր այդ երկրում իր տնտեսական շահերն ու քաղաքական միտումները, այն ժամանակ Կ ա յ զ ե ր ը այլ ևս չհամբերեց. խօսեց և խօսեց յանկարծակի, փոքր ինչ վայրագ տոնով: Նա գնաց անձամբ Մարոկկօյի սուլթանի մօտ և լարեց նրան Ֆրանսիայի դէմ:

Սկսուեց Տևտոնի սովորական, նենգաւոր խաղը, որ տարիներից ի վեր յաղթութեան դափնիներ է վաստակում Բօսֆորի ափերում: Եւ զարկուեց ահազանգը, Եւրոպան յուզուեց, ասես պատերազմի շէփորն էր հնչում Մարոկկօյի մայրաքաղաքից: Ֆրանսիան էլ սթափուեց և զարմանքով ու զարհուրանքով տեսաւ, որ ծանր վայրկեանի պատասխանատուն իր սեփական դիւանագիտութիւնն է, մինիստր Դելկասէն է, որը տարիների ընթացքում ինքնագլուխ վարելով արտաքին գործերը, մի շարք վրիպումներով հասցրել էր երկիրը վաղուց ի վեր չտեսնուած ճգնաժամի: Շիտակ ու վճռական մի թափով նա վայր գլորեց միահեծան մինիստրին և ուզեց ցոյց տալ դրանով իր լոյեալ ընթացքը Գերմանիայի նկատմամբ և իր խաղաղ ու հաշտարար տրամադրութիւնը:

Վիլհէլմ Բ. չբաւականացաւ դրանով: Նրա գործակալները շարունակեցին գրգռել Մարոկկօյի սուլթանին, որը, ի վերջոյ, Գերմանիայի ճնշման տակ ու նրա թելադրութեամբ հրատարակեց մի շրջաբերական, որով հրաւիրում էր պետութիւններին խ ո ր հ ր դ ա ժ ո ղ ո վ ի՝ լուծելու համար Մարոկկօյի կնճիռները: Եւ այդ առթիւ այսօր Պարիզն ու Բերլինը բանակցութեան մէջ են տակաւին. .

Միաժամանակ Գերմանիայի բուրժուազական մամուլը իր տոնը բարձրացրեց, ռազմական հովեր առաւ, Վիլհէլմի մտերիմները սպառնացին Ֆրանսիային՝ աւեր ու կործանումով... Սպառնացին նաև Անգլիային: Նրանք այնուամենայնիւ խոստովանեցին, որ Գերմանիայի նաւային ուժերը չնչին են Բրիտանիայի հսկայ նաւատորմի դիմաց (13 զրահանաւ ընդդէմ 35-ի) և որ վերջինը ջարդ ու փշուր կ՚անէ առաջինին, կ՚աւերէ գերմանական նաւահանգիստները: „Սակայն—ասում են Բիսմարկեանութեան դաժանադէմ խնկարկուները—հնարաւորութիւն չունենալով մրցելու բրիտանական կղզիներին, մենք կը հեղեղենք մեր զօրքերով Ֆրանսիայի հողը, վրէժխնդիր կը լինենք նրանից, կը ջարդենք, կ՚աւերենք և կ՚առնենք այնքան պատերազմական տուգանք, որքան հարկաւոր է մեր կորուստները վերականգնելու համար"...

Ահա ամբարտաւան միլիտարիզմի տրամաբանութիւնը, նրա մտածելու և զգալու եղանակը: Տարաբախտաբար, քաղաքակրթութիւնը ասես տակաւին մատնուած է այդ գարշելի ոճրագործների քմահաճոյքին: Բանուորական կուսակցութիւնները ըմբոստանում են, ճիշտ է. Բէբէլները և Ժօրէսները բողոքում են կատաղութեամբ, բայց արդեօք կը կարողանա՞ն նրանք սանձահարել ռազմատենչ դիպլոմատների ու գեներալների ախորժակները և կանխել ամենաահռելի ոճիրներից մինը, որ պատրաստւում է քաղաքակրթութեան, մարդկայնութեան դէմ. .

* * *

Դելկասէն գնաց: Եօթ տարի մինիստրութիւն—հազուադէպ երևոյթ ֆրանսիական հանրապետութեան կեանքում: Եօթ տարի նա վայելում էր իր հայրենակիցների յարգանքը և, իբրև ճարպիկ դիւանագէտ, ընդհանրապէս խաղաղարար, որոշ հմայք էր վաստակել նաև Ֆրանսիայից դուրս: Բայց այժմ հեռացաւ, գրեթէ նզովուած նոյն հայրենակիցներից, բողոքների ու պարսաւանքների տարափի տակ:

Դուրս է գալիս, որ սխալուած են եղել նրա ընդունակութիւնների և խաղաղասէր զգացումների վերաբերմամբ: Նա հանդէս է գալիս այժմ, որպէս մի չար ոգի, մի մեծամոլ ինտրիգան, որ նպատակ ունէր խայտառ մեկուսացնել Ֆրանսիայի աւանդական հակառակորդին, Գերմանիային, և պատրաստել ռ ը վ ա ն շ ի, վրէժխնդրութեան մեծ հարուածը, որը, սակայն, ռըվանշի տեղ կարող էր մեծամեծ աղէտներ բերել նախ և առաջ իր հայրենիքին, Ֆրանսիային:

Մինիստր Դելկասէն քիչ դեր չխաղաց և Թիւրքական Արևելքի գործերում: Նա սուլթանական տիրապետութեան հակառակորդ էր և ատուած էր Եըլդըզ քեօսկում: 1901 թ. ֆրանսիական նաւային ցոյցից ի վեր (որը, ինչպէս յայտնի է, վերջացաւ Ֆրանսիայի պահանջների յաղթանակով) սուլթանի աչքը վախեցած էր Դելկասէից: Եւ այդ վախը առանձնապէս շեշտւում էր Կ. Պոլսում ամէն անգամ, երբ հայկական խնդիրը հրապարակ էր նետւում ֆրանսիական մամուլի և մանաւանդ պարլամենտի մէջ:

Կային րոպէներ, երբ Թիւրքահայ ժողովուրդը ոգևորւում էր Դելկասէով և նրա վրայ յոյսեր էր դնում: Եւ իրօք նա լաւ էր տրամադրուած մասնաւորապէս դէպի հայերը և աջողեց անել ու անել տալ ուրիշներին մի քանի համեստ քայլեր ժողովրդի ապահովութեան համար (հիւպատոսների աւելացումը Թիւրքաց Հայաստանում, կորովի ազդարարութիւնները Թիւրօ կառավարութեան առաջ՝ նոր խմբական կոտորածներ սպառնալու դէպքում եայլն): Հանօտօ-ճիւաղից յետոյ, Դելկասէն մի հրեշտակ էր հայութեան համար:

Սակայն շուտ պաղեց հայի ոգևորութիւնն էլ: Վճռական րոպէներում, երբ հայոց ճգնաժամի ա ր մ ա տ ա կ ա ն լ ո ւ ծ մ ա ն խնդիր էր դրւում հրապարակի վրայ, այդ հրեշտակը ևս դաւաճանեց մեզ—յիշենք նախորդ տարուայ Սասունի ապստամբութիւնն ու տագնապը, Ֆրանսիայի վարմունքներն ու յապաղումները — և ապացուցեց, որ գիտէ հլու սպասաւոր լինել ցարի կառավարութեան ու „ալլիանսին". . .

Ի՞նչ տիպարի մարդ կը լինի արդեօք Դելկասէի յաջորդը—ապագան ցոյց կը տայ: Յամենայն դէպս այժմից արդէն մի հանգամանք պարզ ցոլում է հասարակական կարծիքը վարող մամուլի մէջ.—այն որ Դելկասէի անձնաւորութեան հետ մի ամբողջ դիւանագիտական սիստեմ է տապալւում, որ Ֆրանսիան այլևս տրամադիր չէ իր դիւանագիտութիւնը ստորադրել ցարիզմի քմահաճոյքներին:

# ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## Ի՞ՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ՕՏԱՐՆԵՐԸ

(ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ)

—

Այս էլ մի դժբախտութիւն է, որ կովկասահայի անօրինակ ճգնաժամին զուգադիպում են միջազգային քաղաքականութեան ծանրակշիռ խնդիրներ, որոնք շեղթայում են հանրային ուշադրութիւնը իրենց հրատապ ու ահաւոր այժմէութեամբ: Մի ուրիշ դժբախտ հանգամանք էլ կայ. մարդկանց նեարդերը կարծրացել են ամենօրեայ արհաւիրքներից, պատերազմի և ցարիզմի պատճառած աղէտներից, Ռուսաստանում սովորական դարձած հեկատոմբներից և դուք այլևս շատ չէք յուզում նոյնիսկ ամենազգայուն հրապարակախօսներին, երբ պատմում էք նրանց կովկասեան դժոխքի մանրամասները:

Այնուամենայնիւ, ռուսահայերի ծանր, բացառիկ փորձութիւնները գտնում են արձագանք եւրոպական և մասնաւորապէս ֆրանսիական և անգլիական մամուլի մէջ: Ամենախիստ ոճով նշաւակում են աղէտի համար պատասխանատու բռնապետութիւնը... Մի չնչին սփոփանք, ընթերցող... Մի հանգամանք, սակայն, որ հայ ժողովրդի արիւնահոս վէրքերը դէթ մասամբ կազդուրելու բնոյթը չունի. Նա անկարող է թւում, տարաբախտաբար, նոյնիսկ կանխելու նորանոր ոճիրները, սահման դնելու մարդ-գազանի ախորժակներին: Եթէ եւրոպացի հրապարակախօսների զգայնութիւնը կոշտացել է յաճախակի մասսային դժբախտութիւններից, ապա այդ դժբախտութիւնների գլխաւոր հեղինակ ցարիզմը ևս սովորել է անխռով դիտել ոչ միայն իր նիւթած գարշանքները, այլ և հասարակական կարծիքի այս կամ այն տրամադրութիւնը, լուսաւոր մարդկութեան ցասումն ու խարազանումները:

Ոճրագործի նեարդերը չէ՞ որ աւելի կարծր են լինում. պարտաւորութեան զգացումը իսպառ չքանում է նրա մէջ և... մարդկային դժնդակութեան ու յարաճուն գազանութիւնների դիմաց՝ թշւառ, լքւած, արեան մէջ լողացող զոհերին մէկ ելք է միայն մնում,— ապաւինել ոչ թէ հանրային կարծիքին, ոչ թէ քաղաքակիրթ մարդկութեան պլատոնական համակրութիւններին ու ցոյցերին,— ո՛չ, չարաբախտ հայրենակիցներ, ո՛չ, հալածական հայ ժողովուրդ, քեզ մնում է ընտրել ինքնապաշտպանութեան, զինւած դիմադրութեան ճանապարհը, որ թելադրում է քեզ կեանքի անսիրտ տրամաբանութիւնը, գոյութեան կռւի անողոք փաստը, վերջապէս, մարդկային տարրական արժանապատւութեան զգացումը: Եւ եթէ այս անգամ էլ դու կ'արհամարհես քո ըմբոստ զաւակների պաղատագին յորդորները, եթէ այս դէպքում էլ անզէն ու անկորով ողջակէզի պէս կը գալարւես խուժանի վայրագ ձեռքերում, այն ժամանակ կը մնայ խաչ դնել միանգամ ընդմիշտ մեր կուլտուրական առաջադիմութեան ու քաղաքացիական արիութեան վրայ, այն ժամանակ էլ զուր կը դիմես աղաչանքներով Եւրոպայի հանրային կարծիքին, քաղաքակրթւած ազգերի օգնութեան,— քեզնից բոլորն էլ արհամարհանքով երես կը դարձնեն, դու համաշխարհային նշաւակութեան առարկայ կը դառնաս, ամբողջ մարդկութիւնը կը դրոշմէ քո ճակատին ամօթի և ստրկութեան անջնջելի կնիքը...

*

Եւրոպական մամուլը յոգնել է հայի զազրելի համակերպութեան պատմութիւններից — այդ մենք տեսնում ենք բոլոր երկրների լրագրութեան մէջ — բայց, միւս կողմից, որպիսի գոհունակութեամբ է նա արձանագրում հայկական կեանքի դրական կողմերը, առնական ըմբոստութեան նշոյլները, յեղափոխական այլևայլ ձևի արտայայտութիւնները:

Հայ ֆէդային, հայ մարտական կազմակերպութիւնը իր հերոսական անվեհերութեամբ, կարող է աշխարհի հիացմունքը շարժել, բայց ի՞նչ է նա հայութեան ճնշող մեծամասնութեան առջև, որ ընդհանուր առմամբ շարունակում է մնալ մի իներտ զանգւած, դիւրաւ համակերպող, առանց գործօն նախաձեռնութեան... Ի՞նչ դիմադրական ուժ ցոյց տւեց նա Բագւի վիթխարի աղէտի միջոցին, երբ „Դաշնակցութեան" մի բուռն կտրիճները ջարդում ու քշում էին վայրենի խուժանը, ազատելով քաղաքը անհամեմատ աւելի մեծ աղէտներից ու անպատւութիւնից: Ի՞նչ ասէ օտարը այդ անշարժ ու անձայն ընդհանրութեան մասին: Ի՞նչ ասել, երբ տասնեակ հայկական գիւղեր են կործանւում այսօր և բնակիչները անպաշտպան ջարդի կամ փախուստի մատնւում, մինչդեռ բոլորից ստուգւած իրողութիւն է, որ զինւած կտրիճների մի փոքրիկ խումբ բաւական է ամէն մի գիւղում՝ արիւնռուշտ վոհմակներին յետ մղելու համար: Ի՞նչ ասեն օտարները, ի՞նչ ասենք մենք նրանց...

Մեր առջև դրւած է անգլիական The Contemporary Riview հեղինակաւոր ու տարածւած հանդէսի մի համարը: Էմիլ Դիլօն, Ռուսաստանում ապրող ու կեանքին լաւատեղեակ՝ հռչակաւոր հրապարակագիրը նկարագրում է այդտեղ, մի հրահանգիչ յօդւածի մէջ, ռուս կայսրութեան ճգնաժամն ու աստիճանաբար քայքայումը և մեծ տեղ է նւիրում կովկասեան տագնապին ու Հ. Յ. Դաշնակցութեանը:

„Ո՜վ սրբազան Ռուսաստան" (Սվետայա Ռուս) — հեգնութեամբ ու դառնութեամբ բացականչում է նա, յիշելով Էջմիածնի դռների խորտակումը, վանքերի ու եկեղեցիների կողոպուտը:

„Ազգը ազգի դէմ, եկեղեցին եկեղեցու դէմ, դասակարգը դասակարգի դէմ, շահը շահի դէմ՝ լարում է յարաժամ ռուս կառավարութիւնը, և երբ բանը հասնում է ընդհարումների ու արիւնհեղութեան,— ոստիկանութիւնը կանգնում ու դիտում է tertius gaudens-ի (երրորդ խնդացողի) դերում:

„Կովկասը այն երկիրն էր, ուր քաղաքական այդ հին միջոցը (ազգերի փոխադարձ գրգռումը) առաջ տարւեց մեծ չափերով: Այդ ընդարձակ երկիրը իր երկու ղեկավար ժողովուրդներով, հայերով ու վրացիներով ապստամբութեան մէջ էր"...

Այստեղ հեղինակաւոր ու ճարտար լեզւով Դիլօն պատմում է գալիցինեան ռէժիմի բոլոր սքանչելիքները, որոնք իվերջոյ յանգեցին եկեղեցական գոյքերի յափշտակութեան և հայ ժողովրդի յեղափոխական ուժերի բռնկման:

„Այն ժամանակ և միայն այն ժամանակ, դրօշակեանների դաշնի ընկերութիւնը, որ կազմւած էր թիւրքահայերին օժանդակելու համար, անհրաժեշտ համարեց դարձնել իր ուշադրութիւնը և իր ռուսահայ հայրենակիցների վրայ: Նա իր գիրկն առաւ ուսուցիչներին, որոնց կառավարութիւնը դուրս էր արել հայ դպրոցներից, և ղրկեց նրանց՝ ժողովուրդը լուսաւորելու: Կօմիտէն ստեղծեց գաղտնի ատեանների մի ամբողջ սիստեմ՝ գիւղացիների մէջ արդարադատութիւնը արագ ու անաչառ կերպով առաջ տանելու և լուծելու համար այն բոլոր վէճերը, որոնք ծագում են թէ գիւղացիների և թէ ազգաբնակութեան տարբեր հատւածների մէջ:

„Այդ տանուտէրները, որոնց դատաւորութիւնը միշտ աչքի է ընկնում իր անսովոր արագութեամբ և որոնց վճիռները առհասարակ ներշնչուած են լինում արդարութեան նուրբ զգացումով, դարձել են վերին աստիճանի ժողովրդական մի ոգի մէջ, որ մինչև օրս սովորած էր սպասել ամիսներ ու տարիներ՝ ստանալու համար այնպիսի դատավճիռներ, որոնք երբեմն դէմ էին ամենայն ճշմարտութեան և յաճախ անհամաձայն օրէնքի բառին:

„Այդպէս, բոլորովին վերջերս ռուսական արդարադատութեան երևանեան բաժնի ներկայացրած պաշտօնական հաշուեգէկուցման մէջ զարմանք էր յայտնուած, որ գիւղացիների աշխարհում ամէն տեսակի վէճերը ահագին չափով նուազել են:

„Բանտեր չունենալով իր տրամադրութեան տակ, կոմիտէն պատժում է սեփականութեան դէմ կատարուած յանցանքները զանազան եղանակներով, որոնք բաւական օրիգինալ են և զուարճալի: Օրինակ նա ստիպում է որոշ կարգի յանցաւորին՝ կանգնել ամբողջ օրը հրապարակի վրայ և բարձրաձայն յայտարարել ամէնքին, որ ինքը անպիտան է, գող է: Այնուհետև կոմիտէն թոյլ է տալիս նրան տուն վերադառնալ և աշխատել վերականգնելու իր կորցրած վարկը:

„Գժգոհ հայերի օրինակին հետևեցին վրացիները, որոնք հիմնեցին „Սակարթվելօ" ընկերութիւնը, ճիշտ „Դրօշակ"-ի գծերով: Այդ ընկերութիւնը տարածուեց զարմանալի արագութեամբ, իր կենտրոն Փօթիից՝ դէպի Բաթում ու ամբողջ Վրաստան: Երկու շարժումների ղեկավարներն էլ, անտարակոյս, ուժեղ կամքի տէր մարդիկ են և օժտուած կազմակերպելու հազուագիւտ կարողութեամբ: Նրանք յաճախ կաշառում են ոստիկանութիւնը, որը մատուցանում է նրանց գնահատելի ծառայութիւններ:

„Այդ գաղտնի կոմիտէները իրօք կազմում են իրենց ազգային կառավարութիւնները, որոնք վարում են հայերի ու վրացիների բազմաթիւ գործերը"...

Մի կողմ ենք թողնում Դիլօնի տուած ուրիշ մանրամասնութիւնները Հ. Յ. Դաշնակցութեան ուժի ու հմայքի և հայ ժողովրդի վրայ ունեցած նրա ազդեցութեան մասին: Յիշատակուած կէտերի մէջ էլ ընթերցողն ինքը կը շտկէ աչքի ընկնող անճշդութիւնները: Հայ յեղափոխական մարմնի գործունէութեան ինքնատիպ եղանակների առթիւ՝ ես հիացման բացագանչութիւններ շատ եմ լսել օտարներից և նոյնիսկ հռչակաւոր յեղափոխական մտածողներից ու գործիչներից: Թող դա լինի խրախոյս՝ մասնաւորապէս մեր գաւառական կոմիտէների համար, որոնք կոչուած են, ահագին պատասխանատուութեամբ, վարելու միլիոնաւոր գիւղական մասսայի ճակատագիրը...

*

Այնուհետև Դիլօն պատճառաբանում է ազգայնական ատելութեան անսովոր բռնկումները Անդրկովկասում, նշաւակում է բարձր կառավարութեան նողկալի դերը, նրա բացարձակ մեղսակցութիւնը: Հայ և վրացի գաղտնի կազմակերպութիւնների համերաշխութիւնը աւելի ոյժ տուեց կառավարութեան ծրագիրներին: Այդ վերջինը, թղթակցի ասելով, աշխատեց նախ ընդհարումներ առաջացնել հայերի ու վրացիների միջև, „սակայն հայերը միշտ խաղաղութեան կողմն էին, վրացիներն էլ, բաւականաչափ քաղաքակիրթ լինելով, չէին կարող գործիք դառնալ որևէ ոճրի: Այն ժամանակ թիւրքերին գրգռեցին հայերի դէմ":

Եւ անգլիացի հրապարակագիրը պատմում է երկար—փաստերով, քաղուածներով—Բագւի զարհուրելի ողբերգութիւնը, որի գժոխային մանրամասները նա համեմատում է Ֆրանսիական Յեղափոխութեան սարսափների հետ:

# ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

* * *

*Temps*-ի թղթակից հեռագրով հետևեալ մանրամասնութիւններն է հաղորդում յուլիսի 21-ին սուլթանի կեանքի դէմ կատարուած փորձի մասին *).

Պոլիս, 23 յուլիսի

Պայթիւնը առաջացրեց մի դժոխային մեքենայ, որ դրուած է եղել օտարականներին բերող կառքերի մէջն: Մեքենան պարունակած պէտք է լինի 15 կիլօգրամ դինամիտ, գնդակներ և երկաթի կտորներ: Որոտը զարհուրելի էր և լսուեց մօտ տասը կիլօմետրի վրայ: Ռումբը մի մետր տրամագծով և յիսուն սանտիմետր խորութեամբ փոս առաջացրեց և սպանեց 23 մարդ, վիրաւորեց 67, ջարդուփշուր արեց 30 կառք՝ սպանելով 50 ձի. դեսպանների և թիկնապահների պավիլիօնների բոլոր ապակիները փշրուեցին օտարականներին յատկացուած հիւրանոցի մօտ: Մզկիթի ժամացոյցի աշտարակը ճեղքուեց և ժամացոյցը փշրուեց: Սպանուածների թւում է մի ներքինի, որ գտնւում էր մզկիթի դրան բակում. օտարականներից վիրաւորուած է մի գերմանուհի և մի իտալուհի:

Փորձի հեղինակը տակաւին անյայտ է: Դա հաւանականաբար մի բուլղար է, որովհետև վերջին ամսում կառավարութիւնը իմացել էր, որ բուլղարական կոմիտէները պատրաստւում են սուլթանի դէմ սպանութեան փորձ կատարել:

Սուլթանը նշանակել է մի մեծ քննիչ յանձնաժողով, որի մէջ մտած են զինուորական մինիստրը, սուլթանի առաջին քարտուղարը և իտալացի գեներալ Ռոմէի փաշան: Ընդհանուր կարծիք կայ, թէ բուլղարական կոմիտէները կամեցել են շփոթութիւն ձգել զօրքերի մէջ, յուսալով, որ սրանք այնուհետև կըսկսեն քրիստոնեաների կոտորած:

Բուքարեստ, 23 յուլիսի

Սուլթանի դէմ եղած փորձը ահագին տպաւորութիւն թողեց բուլղարական մայրաքաղաքում: Ժողովրդի մեծամասնութիւնը, որ աւանդական քէն ունի պահած այն բոլորի համար, ինչ որ թիւրքական է և մասնաւորապէս ատում է սուլթանին, որպէս բուլղարների գլխաւոր թշնամու, բնականապէս ցաւում է, որ փորձն անյաջող է անցել:

Պաշտօնական շրջանները ընդհակառակը գոհ են, որ սուլթանը փրկուել է, որովհետև, կարծում են նրանք, եթէ փորձը յաջողութիւն ունենար, դժւար է ասել, թէ ինչ հետևանքներ կ'ունենար Բալկանեան թերակղզու առանց այն էլ վտանգաւոր կացութեան համար: Այդ շրջանները երկիւղ են կրում, թէ մի գուցէ Թիւրքիան առիթ բռնի այդ փորձը և սաստկացնի հալածանքները բուլղարների դէմ Մակեդոնիայում և Ադրիանապօլսի վիլայէթում: Վերջին դէպքում թիւրքօ-բուլղար յարաբերութիւնները աւելի կարող են սրուել: Հետաքրքիր է իմանալ մակեդոնացիների կարծիքը: Ի պատասխան այն հարցերին, որ ես առաջարկեցի ներքին կազմակերպութեան կարևոր անդամներից մէկին, վերջինս ասաց. «Եթէ «Ներքին կազմակերպութիւնը» ցաւում է այդ փորձի համար, այդ միայն ի նկատի ունենալով Թիւրքիայի դժբախտ քրիստոնեայ ազգաբնակութեան վիճակը, որը կարող է սուլթանի վրէժխնդրութեանը ենթարկուել. Աբդիւլ-Համիդը ինչպէս և իր միւսիւլման հպատակները այս առիթը բաց չեն թողնի պատասխանատու բռնելու ամբողջ Մակեդոնիան

*) Այս եղակի դէպքի մանրամասնութիւնները մենք կը հրատարակենք շուտով յատուկ „Յաւելուածով":

